## ԿԱՐԾԻՔ

***Իզաբելլա Կարենի Մանուկյանի «Կլաստերային մոտեցումը որպես տարածաշրջանային փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կարևոր նախադրյալ (ՀՀ նյութերով)»*** *թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար*

### *Ատենախոսության թեմայի արդիականությունը*

Ժամանակակից աշխարհում պետություններն բարձրացնում են իրենց մրցունակությունը՝ փորձելով արդյունավետ օգտագործել տնտեսական և տարածաշրջանային ներուժը: Այս համատեքստում տարածքային զարգացման խնդիրները՝ հատկապես փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) խթանումը, հանդիսանում են կարևոր քաղաքական ու տնտեսական ուղղություններ: Կլաստերային մոտեցումը համարվում է արդյունավետ գործիք տարածքային տնտեսական աճի, նոր աշխատատեղերի ստեղծման և մրցունակության բարձրացման համար:

Հայաստանի Հանրապետությունում տարածքային անհավասարությունները շարունակում են ազդել երկրի սոցիալական ու տնտեսական զարգացումների վրա: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը հանդիսանում է ՀՀ տնտեսական համակարգի առանցքային բաղադրիչ, որի զարգացումը տարբեր տարածաշրջաններում զգալիորեն տարբերվում է՝ կախված տնտեսության զարգացման մակարդակից, ենթակառուցվածքներից և ռեսուրսների հասանելիությունից: Ներկայումս պարզ է դարձել, որ անհրաժեշտ է նպատակային մոտեցում՝ աջակցելու տարածաշրջանների զարգացմանը, և կլաստերային մոտեցումը համարվում է այդ խնդիրների արդյունավետ լուծում:

Կլաստերները խթանում են բիզնեսի, գիտության և պետական կառավարման միջև համագործակցությունը, արագացնում են նորարարությունների ներդրումը, և ստեղծում են մրցունակ բիզնես միջավայր: Այս համատեքստում, մասնավորապես ՀՀ մարզերում ՓՄՁ

կլաստերների ձևավորումը կարող է դառնալ տնտեսական աճի, աշխատատեղերի ստեղծման և տարածաշրջանների զարգացման շարժիչ ուժ:

Ատենախոսության թեման համապատասխանում է արդի պահանջներին՝ առաջարկելով կարևոր խնդիրների լուծումներ: Ուսումնասիրությունն ունի բավարար գործնական նշանակություն, քանի որ ներկայացնում է, թե ինչպես կլաստերային մոտեցումն ու կառավարման նոր մեթոդները կարող են բարելավել Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության ներուժը՝ առկա ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործելով:

### *Հետազոտության նպատակներն ու խնդիրները*

Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների (մարզերի) ներուժի վերլուծությունն ու գնահատումն է՝ փոքր և միջին ձեռնարկությունների կլաստերների ստեղծման տեսակետից: Նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են ներքոնշյալ խնդիրները.

- ուսումնասիրել կլաստերային կառուցվածքների բնույթի և դրանց բազմաչափ էության տեսական ասպեկտները՝ կլաստերային տեսության և պրակտիկայի ծագման առանձնահատկությունները հասկանալու և ժամանակակից կլաստերների՝ որպես բարձրագույն բազմաչափ կառուցվածքների, առանձնահատկությունները բացահայտելու համար,
- ուսումնասիրել տարածաշրջանային կլաստերների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները՝ բիզնեսի կլաստերավորման ժամանակակից մոտեցումները որոշելու և ամենատարածված մոդելները համեմատելու համար,
- ուսումնասիրել նորարարական փոխակերպումը՝ բիզնեսի կլաստերավորման վրա դրա ազդեցության համատեքստում,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության մարզերի սոցիալ-տնտեսական ներուժը ժամանակակից պայմաններում՝ տարածաշրջանային անհավասարությունները և ընդհանուր արդյունաբերական միտումները բացահայտելու համար,

- կատարել զարգացած և զարգացող երկրներում (գինեգործության և զբոսաշրջության ոլորտում) ՓՄՁ-ների տարածաշրջանային կլաստերավորման միջազգային լավագույն փորձի վերլուծություն,
- կատարել զարգացած և զարգացող երկրներում (գյուղատնտեսական արտադրանքի արդյունաբերական վերամշակման և գյուղատնտեսական կենսատեխնոլոգիայի ոլորտներում) ՓՄՁ-ների տարածաշրջանային կլաստերավորման միջազգային լավագույն փորձի վերլուծություն,
- դիտարկել Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման տարածաշրջանային ներուժի բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելու մեթոդաբանության կիրառման հեռանկարները,
- իրականացնել գնահատումներ՝ Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ կլաստերավորման տարածաշրջանային ներուժը բացահայտելու համար՝ հաշվի առնելով տարբեր մեթոդաբանությունների կիրառումը՝ ավելի հուսալի արդյունքներ ստանալու համար,
- դիտարկել հնարավորություններ Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների տարածաշրջանային կլաստերի ձևավորման համար:

***Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը***

Ատենախոսության գիտական նորույթները արտացոլվում է հետևյալ արդյունքներում.

1. Մշակվել է նորարարական կլաստերների սահմանում՝ հիմնված հետևյալ՝ գործոնների վրա. նորարարական արտադրանքի ստեղծում, եռակի պարույրի (triple helix) բոլոր կոմպոնենտների ընդգրկում, խաչվող ոլորտների (cross-sectoral industries) ներկայացուցիչների ներառում կլաստերների անդամների կազմում, միջազգային որակի ստանդարտների ներդրում, լոգիստիկ շղթաների ամրապնդում և տարածաշրջանների բրենդավորում:

2. Մշակվել է տարածաշրջանային ՓՄՁ կլաստերների ստեղծման համար տարածաշրջանների ներուժի գնահատման նոր մեթոդաբանություն՝ հետևյալ տարրերի

ներառմամբ. որակական և քանակական նպատակների ալգորիթմացում, չորս քայլից բաղկացած գնահատման ընթացակարգի մշակում և բիզնեսի կլաստերավորման ներուժի գնահատման հաշվարկի նոր մատրիցային ձևով մեթոդիկա՝ փոխկապակցված եռակի պարույրի բաղադրիչների հետ:

3. Առաջադրվել և կիրառվել է համալիր մեթոդիկա՝ ՀՀ մարզերի ՓՄՁ-ների կլաստերավորման առավել մեծ ներուժ ունեցող մարզերի հայտնաբերման համար, օգտագործելով միջազգային ընդունված (տնտեսական գործակիցների հաշվարկ) և նոր մատրիցային գնահատման մեթոդները՝ հաշվի առնելով դրանց ՓՄՁ սուբյեկտների առավել բարձր ակտիվությունը:

***Ատենախոսության հիմնական բովանդակությունը***

Ատենախոսությունը կազմված է երեք գլխից, ներածությունից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածներից: Յուրաքանչյուր գլուխում ներկայացված են հետազոտության հիմնական փուլերը և արդյունքները, որոնք տրամաբանական շարունակություն են կազմում հետազոտության նպատակների ու խնդիրների իրագործման համար:

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, պարզաբանվում են նպատակը, խնդիրները, օբյեկտը և առարկան, արտացոլվում է աշխատանքում կիրառված մեթոդաբանությունը, նշվում են գիտական նորույթները և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին (**«Փոքր և միջին ձեռնարկությունների տարածաշրջանային կլաստերները և դրանց զարգացման առանձնահատկությունները 21-րդ դարում»**) գլխում ուսումնասիրվում է կլաստերային կառուցվածքների բնույթը և դրանց բազմաչափ էությունը: Բացահայտվում են փոքր և միջին ձեռնարկությունների տարածաշրջանային կլաստերավորման առանձնահատկությունները և դրանց զարգացումը թվային փոխակերպման համատեքստում: Կատարվում է գրականության համապարփակ ուսումնասիրություն, ինչպես նաև դիտարկվում են կլաստերներ ստեղծելու եղանակները: Առաջին գլխում բացահայտվում է կլաստերային քաղաքականության էությունն ու դրա

կապը կլաստերային նախաձեռնությունների հետ: Ներկայացվում է աշխարհի ամենամրցունակ և տարածված կլաստերավորման մոդելների համեմատություն՝ ընդգծելով ժամանակակից և նորարարական պայմանները, որոնք բարելավում են դրանց մրցունակությունը:

Ատենախոսության երկրորդ (**«ՀՀ տարածաշրջանային ներուժը և միջազգային առաջադեմ ՓՄՁ կլաստերավորման փորձը»**) գլխում հեղինակը փորձ է կատարում վերլուծել Հայաստանի մարզերի սոցիալ-տնտեսական և բիզնես քանակական ու որակական ներուժը՝ փոքր և միջին ձեռնարկությունների տարածքային կլաստերավորման համատեքստում: Կատարվում է միջազգային առաջադեմ ՓՄՁ կլաստերավորման փորձի համեմատական վերլուծություն զարգացած և զարգացող երկրների օրինակներով: Առանձնացվում են գինեգործության և զբոսաշրջության, գյուղատնտեսական արտադրանքի արդյունաբերական վերամշակման ու և գյուղատնտեսական կենսատեխնոլոգիայի ոլորտների առավել հաջող փորձերը: Կիրառվում են վիճակագրական, համեմատական և ժամանակակից վերլուծական մեթոդներ՝ կլաստերային զարգացման հնարավորությունները բացահայտելու համար: Դիտարկվում են նաև սույն կլաստերների ստեղծման հնարավորություններն և խոչընդոտները՝ հաշվի առնելով Հայաստանի մարզերի գոյություն ունեցող ներուժը:

Ատենախոսության երրորդ (**«Կլաստերային մոտեցման կիրառման հեռանկարները ՀՀ-ում տարածաշրջանային փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար»**) գլխում ներկայացվում է նոր մեթոդաբանական մոտեցում՝ ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների կլաստերավորման առավելագույն ներուժ ունեցող տարածաշրջանների ընտրության համար:

Մոտեցումը հիմնված է հիերարխիաների վերլուծության, վերլուծական շղթաների կառուցման և փոխկախվածությունների տեսական սկզբունքների վրա: Առաջարկվում է նպատակադրման ալգորիթմ՝ կլաստերացման ամենաբարձր ներուժ ունեցող տարածաշրջանը որոշելու համար, ներառելով քանակական և որակական ցուցանիշներ:

Կատարվում է տարածաշրջանային ՓՄՁ կլաստերավորման ներուժի գնահատում՝ համատեղելով միջազգային ընդունված և նոր մշակված մեթոդաբանություններ:

Երրորդ գլխում նաև բացահայտվում են Հայաստանի Հանրապետության մարզերում ՓՄՁ կլաստերներ ձևավորելու հնարավորությունները և առաջարկվում են համապատասխան կլաստերային մոդելներ:

Ատենախոսության եզրակացություններում ամփոփված են հետազոտության կարևորագույն արդյունքները և առաջարկվել են քայլեր՝ ուղղված Հայաստանի Հանրապետության տնտեսական ոլորտի զարգացմանն ու բարելավմանը: Աշխատանքի արդյունքները հիմք են ծառայել նպատակային առաջարկությունների մշակման համար, որոնք կարող են նպաստել ՀՀ տնտեսական կայունության և աճի խթանմանը:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսության վերաբերյալ առկա են նաև որոշ դիտողություններ:

- Հիմնական դիտողությունները վերաբերում են հեղինակի կողմից 2.1 կետում ներկայացված ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական ներուժի վերլուծությանը: Բավականին վիճելի են վերլուծության մեջ օգտագործված ցուցանիշները, դրանց կիրառումը, մեկնաբանումը և եզրակացությունները: Այսպես, աշխարհագրական դիրքի ներուժ բաժնում (բլոկ 1) դիտարկվում է մարզերում բնակավայրերի քանակը և ամենաշատ բնակավայր ունեցող մարզը՝ Սյունիքը, համարվում է ամենախիտ բնակեցված (էջ 43): Կարծում ենք, որ բնակավայրերի քանակը չի կարող հանդիսանալ խիտ բնակեցվածության ցուցանիշ, ինչը նաև մի քանի էջ հետո հակասելով նախորդ պնդմանը, ապացուցում է հեղինակը, նշելով, որ բնակչության թվաքանակից ելնելով ամենախիտ բնակեցված մարզը Կոտայքի մարզն է (էջ 45), իսկ Սյունիքի մարզը վերջին տեղերում է:

Նաև հեղինակը փորձում է կոռելյացիա գտնել մարզի բնակավայրերի քանակի և մարզային կենտրոնից մայրաքաղաք հեռավորության միջև, ինչը մեր կարծիքով չի կարող ունենալ տնտեսագիտական հիմնավորում:

Դեմոգրաֆիա և աշխատանքային ռեսուրսներ բաժնում (բլոկ 2) հեղինակը չի դիտարկում աշխատուժի, տնտեսապես ակտիվ բնակչության ցուցանիշները, հակառակ՝ դիտարկում է մեկ շնչի ՀՆԱ-ն, որի կապը դեմոգրաֆիայի հետ բավականին անուղղակի է և երկարաժամկետ ժամանակահատվածում:

Նույն 2.1. կետում հեղինակը որպես նախորդ վերլուծության արդյունքների ապացույց ներկայացնում է միկրո և ՓՄ ձեռնարկությունների շրջանում իրականացված հարցման արդյունքները (էջեր 55-56): Սակայն պետք է նշել, որ հարցվել են ընդամենը 30 ձեռնարկություն, այսինքն ամեն մարզից և Երևանից միջինում 2-3-ը: Հաշվի առնելով նաև, հենց հեղինակի կողմից աղյուսակ 9-ում բերված միկրո և ՓՄ ձեռնարկությունների քանակությունները (ամգամ մի քանի ոլորտի դեպքում) և ընտրանքի մեթոդաբանությունը կարելի է եզրակացնել, որ ընտրանքը այնքան էլ ռեպրեզենտատիվ չէ և արդյունքների արժանահավատությունը վիճելի: Մեծ հաշվով հարցումը գիտական արժեք չի ներկայացնում:

- Վերոնշյալները իրենց ազդեցությունն են ունեցել նաև հեղինակի կողմից մշակված նոր մեթոդաբանությամբ ՀՀ տարածքային կլաստերիզացման ներուժի գնահատման վրա: Նախ, հեղինակը որպես ամենաներուժային ոլորտ կենտրոնացել է գյուղատնտեսության վրա, սակայն ավելի արժեքավոր կլիներ դիտարկել սննդի վերամշակումը, որն ավելի արդյունավետ է և ավելի մեծ հավելյալ արժեք է ստեղծում: Նոր մեթոդաբանության հենասյուների ենթատարրերը (չափանիշները) ցանկալի է լինեին ավելի ամբողջական, օրինակ, ընդգրկեին աշխատանքային ռեսուրսները, ենթակառուցվածքային ներուժ մասում՝ բացի հողատարածքները ընդգրկվեին նաև այլ ենթակառուցվածքները՝ ջրա-, էլեկտրա-, գազամատակարարումը և այլն:
- Իսկ, օրինակ, հետազոտական ինստիտուտների բազա չափանիշը մարզերում ընդհանրապես կարող է ունենալ չնչին դերակատարում, քանի որ ՀՀ մասշտաբները հաշվի առնելով, դրանց առկայությունը Երևանում նույնպես կարող է համարվել կլաստերի մաս: Հեղինակը աշխատանքում ինքն է փաստում, որ ժամանակակից կլաստերները պարտադիր չէ, որ մի փոքր աշխարհագրական տարածքում լինեն կենտրոնացված:

- 2.2. կետում հեղինակը նկարագրում է մի քանի գինեգործական զբոսաշրջային կլաստեր (էջ 58), ինչը անվանում է համեմատական վերլուծություն, սակայն վերոնշյալ նկարագրությունները չեն պարունակում համեմատական վերլուծության անհրաժեշտ բոլոր տարրերը:
- Աշխատանքում առկա են նաև մի շարք վիճելի պնդումներ, օրինակ էջ 4-ում հեղինակը նշում է, որ Հայաստանում «որքան հեռու է մարզը մայրաքաղաքից, այնքան ավելի են հետ մնում դրա տնտեսական ցուցանիշները», ինչը այդքան էլ ճիշտ չէ: Օրինակ, Սյունիքի մարզի ՀՆԱ-ն (այդ թվում մեկ շնչին ընկնողը) ավելի մեծ է, քան Կոտայքի մարզի ՀՆԱ-ն:
- Էջ 25-ում հեղինակը չգիտես ինչու ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) մշակած կլաստերային զարգացման մոդելը կոչում է «ամերիկյան մոդել»:
- Էջ 40-ում հեղինակը պնդում է, որ «տեղական վիճակագրական ծառայությունների կողմից պարբերաբար իրականացվում են երկրի սոցիալ-տնտեսական ներուժը բացահայտող վերլուծություններ»: Հարկ է նշել, որ ՀՀ ՎԿ լիազորություններից են պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրությունը և տարածումը: Նշված վերլուծությունները կատարվում են համապատասխան վերլուծաբանների, գիտնականների կողմից:
- Բիզնես կլաստերների ձևավորման ռազմավարական 3 մոտեցումները նկարագրելիս (էջեր 20-21) հեղինակը չի կատարել համապատասխան հղումներ, ինչից տպավորություն է ստեղծվում, որ մոտեցումները հեղինակի մշակած նորույթ են:

### *Եզրակացություն*

Ատենախոսության բովանդակության, կառուցվածքի և արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ այն հանդիսանում է հիմնավոր և ավարտուն գիտական աշխատանք: Ուսումնասիրության ընթացքում կիրառված տեսական ու գործնական մոտեցումները, ինչպես նաև ստացված արդյունքներն ու դրանց հիման վրա ներկայացված առաջարկությունները գիտականորեն հիմնավորված են, ունեն տրամաբանական և

կիրառական արժեք: Աշխատանքում արտացոլված վերլուծությունների խորությունն ու ինքնուրույնության աստիճանը վկայում են հեղինակի մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակի մասին: Ատենախոսությունը կարող է ներդրում ունենալ ինչպես գիտական հանրության, այնպես էլ քաղաքականության մշակման և գործնական որոշումների կայացման գործընթացներում: Հարկ է նաև նշել, որ ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլելով հետազոտության հիմնական դրույթներն ու արդյունքները:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարծում եմ, որ Իզաբելլա Կարենի Մանուկյանի «Կլաստերային մոտեցումը որպես տարածաշրջանային փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կարևոր նախադրյալ (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն և ամբողջական գիտական ուսումնասիրություն, և Ի.Կ. Մանուկյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

**Պաշտոնական ընդդիմախոս՝**
**Տնտեսագիտության թեկնածու** **Վ.Ս. Լալայան**

**Վ.Ս. Լալայանի ստորագրության իսկությունը հաստատում եմ՝**

**ՀՌՀ Գիտական քարտուղար** **Ռ.Ս. Կասաբաբովա**

**25 հունիս 2025թ.**